արդյունավետության բարձրացմանը և պետական քաղաքականության մշակման ընթացքում պետություն-հանրություն համագործակցության խորացմանը:

Ծրագրի շրջանակներում տվյալները ազատ հասանելի կդառնան հանրությանը Ֆոնդի վեբկայքի միջոցով: Թղթային կրիչների վրա տեղեկատվությունը կպահպանվի, սակայն թվայնացումը կօգնի երաշխավորել պետական նշանակություն ունեցող տեղեկատվության շարունակական հասանելիությունը, ինչպես նաև նոր ստացվող թղթային և էլեկտրոնային նյութերի զուգահեռ թվայնացումը:
Ֆոնդի ինտերնետ կայքի միջոցով հանրությանը հասանելի կլինի տեղեկատվություն հանքավայրերի մասին, ինտերակտիվ քարտեզներ բարձր ռեզոլուցիայով և հանքավայրերին առնչվող այլ տվյալներ:

Ծրագրի իրականացման փուլերը

Թվայնացման ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել 17 ամիսների ընթացքում, ընդ որում առաջին 6 ամսվա ընթացքում անհրաժեշտ է թվայնացնել առնվազն ֆոնդի 35-40%, ստեղծել նաև տվյալների շտեմարանը և ինտերնետ կայքը ու արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել կայքում: Միաժամանակ թվայնացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել ուսումնական աշխատանքներ ֆոնդի համապատասխան 4 աշխատակիցների հետ:

Թվայնացման աշխատանքների իրականացման փուլերը չորսն են.

- 1-ին փուլ՝ մեկ (առաջին ամիս) ամսվա ընթացքում կազմակերպությունը թվայնացման աշխատանքներին զուգահեռ կմշակի այդ աշխատանքների պլանը ու ժամանակացույցը և կներկայացնի պատվիրատուի հաստատմանը:
- 2-րդ փուլ՝ հինգ (երկրորդից-վեցերրորդ ամիսներ) ամսվա ընթացքում կթվայնացվի ֆոնդի առնվազն 35-40% և կստեղծվի տվյալների շտեմարանը և ինտերնետ կայքը ու արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրվելու են կայքում:
- 3-րդ փուլ՝ տաս (յոթերրորդից-տասնվեցերրորդ ամիսներ) ամսվա ընթացքում կթվայնացվի ֆոնդի առնվազն 90-95%:
- 4-րդ փուլ՝ մեկ (տասնյոթերրորդ ամիս) ամսվա ընթացքում կթվայնացվի ֆոնդի 100%:

Փուլերի ավարտից հետո, մեկ ամսվա ընթացքում կազմակերպությունը պատվիրատուի հաստատմանն է ներկայացնում իրականացված աշխատանքների մասին համապատասխան հաշվետվություններ, որի բովանդակությունը և ֆորմատը նախապես համաձայնեցնում է պատվիրատուի հետ:

Բոլոր 4 փուլերի ընթացքում կազմակերպությունը պետք է իրականացնի ֆոնդի առնվազն 4 աշխատակիցների ուսուցում, ինչպես նաև GIS կառավարման կարողությունների զարգացում՝ ապահովելով հմտությունների փոխանցում և բարձրորակ կատարողականություն, ինչպես նաև աշխատանքների շարունակականություն և կայունություն Ծրագրի շրջանակներից դուրս:

Որակավորումը

Կատարողի նկատմամբ սահմանվող պահանջներ

- Նմանատիպ ծավալի և բարդության թվայնացման աշխատանքների իրականացման փորձ, այդ թվում՝ քարտեզների և լայն ֆորմատի փաստաթղթերի (տարիներ + պայմանագրեր)
- Նմանատիպ ծավալի և բարդության էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների, համակարգերի, ինչպես նաև վեբ կայքերի ստեղծման փորձ (տարիներ + պայմանագրեր)
- Սերվերների տեղադրման, լարքի և սպասարկման փորձ (տարիներ + պայմանագրեր)
- Համապատասխան մասնագիտացված անձնակազմի առկայություն
    - Ծրագրի ղեկավար
    - Ծրագրավորողներ (2-3 հոգի)
    - Նյութերը թվայնացնող աշխատակիցներ (21 հոգի)
    - Վեբ դիզայներ
    - Ցանցային ադմինիստրատոր
- Անձնակազմի միջին մասնագիտական փորձ ըստ տարիների

Կիրառվող սարքավորումները և ժամկետները

Թվայնացման աշխատանքների համար կազմակերպությանը ժամանակավոր օգտագործման սկզբունքով կտրամադրվի 21 հատ համակարգիչ, 21 հատ A4 ֆորմատի և 1 հատ A0 ֆորմատի սքաներներ ու համապատասխան տարածք ֆոնդի շենքում:
Թվայնացման աշխատանքները պետք է իրականացվեն առավելագույնը 17 ամսվա ընթացքում:

Լրացուցիչ պայմաններ

Առաջնորդվելով ծրագրի նպատակներից, ինչպես նաև աշխատանքային գործընթացից ելնելով՝ պատվիրատուն, կազմակերպության կողմից ծառայություն մատուցելու ընթացքում, իրավասու է որոշակի լրացումներ կամ փոփոխություններ իրականացնել սույն տեխնիկական բնութագրում:

ԿԱՅՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

1. Նախաբան և ծառայությունների նկարագրություն

ՀՀ կառավարությունը ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ մեկնարկում է «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), որի բաղադրիչներից է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» (այսուհետ՝ Ֆոնդ) ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացումը և հրապարակումը:
Ծրագրի շրջանակում կստեղծվի տվյալների շտեմարան և ինտերնետ կայք, որում զետեղված կլինի ամբողջ նյութը *(PDF, JPEG, EXCEL, XML և այլ ֆորմատներով)*, և կկիրառվի տեղեկատվության որոնման սկզբունքը, ընդ որում կայքում տեղադրվող նյութերի ուսումնասիրության դյուրինությունն ապահովելու համար կստեղծվի ՀՀ ինտերակտիվ քարտեզ և համապատասխան նյութերը կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին: Նյութերը հասանելի կլինեն ինչպես բարձր, այնպես էլ՝ ցածր ռեզոլուցիայով:

Վերոնշյալ ինտերնետ կայքում նաև կհրապարակվի հետևյալ տեղեկատվություն՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին և մետաղային օգտակար հանածոների քարտեզը:
Միաժամանակ այդ կայքին համապատասխան հղում կտեղադրվի նաև ՀՀ կառավարության էլեկտրոնային ծառայությունների մատուցման կայքում՝ www.e-gov.am - ում:

Տվյալների շտեմարանը կընձեռի աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) հնարավորություններ:

2. Սույն ծառայությունների մատուցման շրջանակներում իրականացվելիք աշխատանքների շրջանակը

Կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները՝

- Մշակի և ներկայացնի տվյալների շտեմարան և ինտերնետ կայք (այսուհետ՝ Պորտալ) մշակման և ներդրման տեխնիկական մասնագիրը, որը պետք է հաստատվի պատվիրատուի կողմից, ներառյալ՝
    - Պորտալի կառուցվածը, ներառյալ
        - բաժինները և ենթաբաժինները,
        - բաժինների և ենթաբաժինների փոփոխության և ավելացման եղանակները,
    - Պորտալի ձևավորումը 3 տարբերակով,
    - պորտալի տեխնոլոգիական հենքը (տվյալների շտեմարանը, ծրագրավորման լեզուն/լեզուները)

    - Համակարգի գործառնական հնարավորությունները, ներառյալ
        - օգտվողների տեսակներն ու լիազորությունները,
        - համակարգի կառավարման ու արդիականացման միջոցները,
    - Այլ համակարգերի հետ ինտեգրման տեխնիկական պայմանները,
    - Համակարգի շահագործման կարգն ու պայմանները,
- Ձեռք բերել պատվիրատուի համաձայնությունը մշակված տեխնիկական մասնագրի վերաբերյալ,
- Իրականացնել համակարգի մշակումը համաձայն տեխնիկական մասնագրի,
- Գործարկել լիարժեք ֆունկցիանալ համակարգը փորձնական ռեժիմում և ստանալ պատվիրատուի դիտողություններն ու աջակցությունը,
- Իրականացնել համակարգի օգտվողների ուսուցում,
- Մշակել և պատվիրատուին փոխանցել համակարգի կառավարման և ուսուցման ձեռնարկները, ներառյալ
    - համակարգի տեղակայման փաթեթը (installation package),
    - համակարգի վթարային վերականգնման ձեռնարկը,
    - համակարգի պահուստային պատճենների կառավարման նկարագրությունը,
- Մշակել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել համակարգի շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների ցանկը, որը ձեռք կբերվի առանձին գնման ընթացակարգով,
- Իրականացնել համակարգի սպասարկում, արդիականացում և լրամշակում ծառայությունների մատուցման ավարտից հետո 1 տարվա ընթացքում:

3. Գործառույթները և պահանջները

Սույն տեխնիկական առաջադրանքը սահմանում է պահանջների այն համախումբը, որոնց իրականացումը կապահովի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող հանրապետության տարածքում կատարված ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված երկրաբանական և այլ տեղեկատվության՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) վերաբերյալ միասնական տեղեկատվական պորտալի ստեղծումը:

4. Պորտալին ներկայացվող տեխնիկական պահանջները

- Պորտալի տեխնիկական իրագործումը պետք է իրականացվի օգտագործելով լայն տարածում ունեցող PHP ծրագրավորման լեզուն և MySQL տվյալների հիմնապաշարը: Այն պետք է ապահովի համապատասխանելիություն տարբեր օպերացիոն համակարգերում աշխատելիս՝ օպտիմիզացված լինելով Linux կամ այլ UNIX օպերացիոն համակարգերի ընտանիքում աշխատող Apache/nginx վեբ սերվերների համար:
- Կայքի էջկապը պետք է կատարվի xHTML1.0 լեզվով՝ համապատասխան W3C ստանդարտներին, անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել նաև HTML 5:
- Կայքի հիմնական և մոբայլ տարբերակների արտաքին տեսքը պետք է լինի գրավիչ, ապահովի առավելագույն գործածելիություն: Կատարողը՝ պատվիրատուի հետ համագործակցելով, կներկայացնի կայքի մուտքի (գլխավոր) և ներքին էջերի տեսքը (գրաֆիկական դիզայնը) այլընտրանքային տարբերակներով: Պատվիրատուն ողջամիտ ժամանակահատվածում կհաստատի տարբերակներից մեկը կամ/և կներկայացնի իր առաջարկները և դիտողությունները:
- Պատրաստվող կայքը պետք է ապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական տարածված զննման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսիք են Internet Explorer (>= v8), Mozilla Firefox, Opera, Safari, Chrome և այլն:
- Կայքը լավարկված պետք է լինի 1280x800 չափի համակարգչային մոնիտորների համար:
- Պորտալը պետք է լինի եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն): Բոլոր լեզուներով գրված տեքստային ինֆորմացիայի անխափան ցուցադրման համար կայքը պետք է գործի Unicode (UTF-8) տառաշարի հիման վրա:
- Համաշխարհային որոնման համակարգերից այցելություններ ապահովելու համար, կայքը տեխնիկապես այդ համակարգերին հնարավորություն պետք է ընձեռի առավելագույնս «խորը» ինդեքսացնելու կայքում զետեղված ինֆորմացիան օգտագործելով SEF հասցեներ:

- Կայքի համար պետք է պատրաստվի նաև մոբայլ տարբերակ նախատեսված սմարտֆոնների գործածողների համար: Մոբայլ տարբերակում արտացոլվելու են կայքի հիմնական անհրաժեշտ բաժինները: Գործածողներին պետք է տրվի հնարավորություն ցանկացած ժամանակ վերադառնալ կայքի հիմնական տարբերակ:
- Կայքը պետք է ունենա բովանդակության կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս հատուկ տեխնիկական գիտելիքներ չունեցող (համակարգչային ծրագրավորման լեզուներին չտիրապետող) անձանց ղեկավարել կայքի բովանդակությունը, ինչպես նաև համալրել էջերի բովանդակությունը և ստեղծել նոր բաժիններ: Բովանդակության կառավարման համակարգը պետք է ունենա մի քանի՝ տարբեր իրավասություններով, օգտագործողների կողմից կայքը սպասարկելու հնարավորություն:
- Բովանդակության կառավարման համակարգը և կայքի առաջնային մասի ծրագրային կոդերը ֆիզիկապես պետք է լինեն տարանջատված: Բովանդակության կառավարման համակարգը հասանելի կլինի միայն համապատասխան թույլատվություններ ունեցող հասցեներից (VPN-ի մոջոցով) և պարտադիր կերպով SSL արտոնագրերի առկայությամբ:
- Կայքը պետք է ունենա գլոբալ որոնման համակարգ, որը թույլ է տալու կատարելու որոնում կայքի ցանկացած բաժնում: Համաշխարհային որոնման համակարգերից այցելություններ ապահովելու համար Պորտալում տեղադրված նյութերը պետք ունենան SEF համատեղելի հասցեներ: Պորտալում գտնվող տեղեկատվության ներկայացման հարմարավետությունը ապահովելու նպատակով պետք է ստեղծվի որոնման առավել հարմար և արդյունավետ համակարգ, որը իր մեջ պարունակի՝ տեքստային բազմալեզու որոնում, որոնում ըստ ամսաթվի, թեմատիկ որոնում, ընդլայնված որոնման միջոցներ:
- Գործածողը պետք է ունենա հնարավորություն բաժանորդագրվել կայքի հաճախ թարմացվող բաժիններին, ինչպիսին է օրինակ լրատվական բաժինը: Տվյալ բաժինների բաժանորդագրությունը հասանելի պետք է լինի նաև RSS Feed-երի միջոցով:
- Կայքի ցանկացած էջի ներքևում պետք է տեղադրվի հատուկ մոդուլ, որը հնարավորություն կտա տարածել տրված էջը սոցիալական ցանցերում, ինչպիսին են Facebook, Twitter, Live Journal, Myspace և այլն:
- Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ստեղծել անսահմանափակ քանակի ստատիկ HTML էջեր:
- Կատարողը պետք է նոր կայքում զետեղի հին կայքում (առկայության դեպքում) առկա ամբողջ տեղեկատվությանը:
- Կայքի կառուցվածքը, արտաքին տեսքը և ծրագրային կոդերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պահանջներին և այն պետք է ապահովի առավելագույնս գործածելիություն այցելուների համար և համապատասխանի պատվիրատուի ընդհանուր գունային և ոճային դրույթներին:
- Կատարողը պետք է իրականացնի կայքի համալիր թեսթավորումը և թեսթավորման ընթացքում հայտնաբերված թերությունների վերացումը:
- Կատարողը պետք է իրականացնի համապատասխան աշխատակիցների ուսուցումը:
- Կատարողը պետք է աշխատանքների հանձնում-ընդունում իրականացնելուց հետո մեկ տարվա ընթացքում իրականացնի կայքի սպասարկումը:
- Պորտալը պետք է հնարավորություն ընձեռի գեներացնել տարբեր տեսակի հաշվետվություններ (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ), օրինակ՝ պորտալի օգտագործման վերաբերյալ վերաբերյալ տեղեկատվության ստացում ներառյալ առավել հաճախ դիտվող էջեր, այցելուների քանակ և այլն:
- Պորտալը պետք է ունենա քարտեզ բաժին, որտեղ օգվողները ինտերակտիվ կկարողանան քարտեզի վրա տեսնել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին համապատասխան նյութերը, որոնք կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին: Քարտեզներ բաժնի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը կտրամադրվի պատվիրատուի կողմից պորտալի մասնագրի պատրաստման ընթացքում:
- Համակարգը պետք է գործարկի ամենօրյա պահուստային ծրագրաշար պորտալի համաչ համար: Պահուստային ծրագրաշարը (back-up software) թույլ կտա իրականացնել պահուստներ (Խաչաձև պահուստներ, համակարը կպահպանի վերջին X օրվա պահուստային տվյալները, վերականգնում

պահուստից և այլն): Կազմակերպությունից կպահանջվի մշակել վեբի վրա հիմնված ինտերֆեյս՝ պահուստային համակարգը կազմաձևելու համար:

- Ընդհանուր պահանջները կրում են նկարագրական բնույթ: Պատվիրատուն իր ներկիայացվելիք մասնագրում կարող է ապահովել գերազանցող կամ համանման այլ գործառնական հնարավորություններ:

5. Գաղտնիություն

Կազմակերպությունն պարտավորվում է գաղտնի պահել ողջ այն տեղեկատվությունը, որը մատչելի չէ հանրությանը և չի ներգրավվի մեկ այլ հանձնարարության մեջ, որը գերակա հանձնարարության հետ շահերի բախման կհանգեցնի:

Ծառայության մատուցման ժամկետը		
Սկիզբը	ավարտը	
Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	2016թ.-ի դեկտեմբերի 23-ը:	
	Կսահմանվի 2017թ.-ին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում (ընդհանուր՝ 17 ամիս):	
որից՝ 2016թ.-ին		
Անվանումը և ծավալը	Մատուցման վերջնաժամկետը	Գումարը /ՀՀ դրամ/
Ծառայության առնվազն 9%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 180000 էջ նյութերի թվայնացում	30.06.2016թ.	7,155,000
Ծառայության առնվազն 6%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 120000 էջ նյութերի թվայնացում	31.07.2016թ.	4,770,000
Ծառայության առնվազն 6%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 120000 էջ նյութերի թվայնացում	31.08.2016թ.	4,770,000
Ծառայության առնվազն 6%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 120000 էջ նյութերի թվայնացում	30.09.2016թ.	4,770,000
Տվյալների շտեմարանի և ինտերնետ կայքի ստեղծում, առնվազն 6% (շուրջ 120000 էջ) նյութերի թվայնացում	31.10.2016թ.	7,770,000
Ծառայության առնվազն 6%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 120000 էջ նյութերի թվայնացում	30.11.2016թ.	4,770,000
Ծառայության առնվազն 6%-ի մատուցում՝ ներառյալ շուրջ 120000 էջ նյութերի թվայնացում	23.12.2016թ.	4,770,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013000329
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցե՝ gnumner@gov.am

/ Ռ. Բաղդասարյան /
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Տպագրիչների շ. 13, բն. 61
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 157-0020836060-100
ՀՎՀՀ 02617951
էլ. հասցեն՝ vahagn.mkhitaryan@vxsoft.com
Հեռ. +37491437990

/ Վ. Մխիթարյան /
Կ.Տ

Հավելված 2
<<18>> մայիսի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման, սպասարկման և տեխնիկական օժանդակման ծառայություններ						7,155.0	11,925.0	16,695.0	21,465. 0	29,235.0	34,005.0	38,775.0	38,775.0

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013000329
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

/ Դ. Բեգլարյան /
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Տպագրիչների 2. 13, բն. 61
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 157-0020836060-100
ՀՎՀՀ 02617951
էլ. հասցեն՝ vahagn.mkhitaryan@vxsoft.com
Հեռ. +37491437990

/ Վ. Մխիթարյան /
Կ.Տ

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ»
"ВИ ИКС СОФТ"
"VXSOFT"
02617951

Հավելված 3
<<18>> մայիսի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<18>> մայիսի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն